երկրորդ ընթերցում

(Լրամշակված նախագիծ)

Կ-623[3] -27.06.2023-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.7-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19.7. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներքաղաքային երթուղու շահագործման, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց կողմից թեթև մարդատար ավտոմոբիլներով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների, ինչպես նաև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման արտոնագիր տրամադրելու համար պետական տուրքի դրույքաչափերը»,

2) 1-ին մասում՝

ա. հանել «միջմարզային, ներմարզային,» բառերը,

բ. «ուղևորափոխադրումների» բառից առաջ լրացնել «ներքաղաքային երթուղով» բառերը,

գ. «տրամադրելու համար» բառերից հետո լրացնել «ամսական» բառը,

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց կողմից թեթև մարդատար ավտոմոբիլներով Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների, ինչպես նաև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով Հայաստանի Հանրապետության տարածքում ուղևորափոխադրումների իրականացման համար արտոնագիր տրամադրելու պետական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր փոխադրման ընդհանուր արժեքի՝

կանխիկ դրամով վճարումների դեպքում	անկանխիկ դրամով վճարումների դեպքում
2 տոկոսի չափով՝ 2024 թվականի սեպտեմբերի 1-ից	1,5 տոկոսի չափով՝ 2024 թվականի սեպտեմբերի 1-ից
3,5 տոկոսի չափով՝ 2025 թվականի հունվարի 1-ից	2,5 տոկոսի չափով՝ 2025 թվականի հունվարի 1-ից
5 տոկոսի չափով՝ 2026 թվականի հունվարի 1-ից	4 տոկոսի չափով՝ 2026 թվականի հունվարի 1-ից»

4) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1.Ուղևորափոխադրումները էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության միջոցով ստացված պատվերով իրականացվելու դեպքում յուրաքանչյուր ուղևորափոխադրման համար սույն հոդվածի 2-րդ մասում նշված չափով պետական տուրքը գանձում և պետական բյուջե է վճարում էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը:»,

5) 3-րդ մասում՝

ա. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) սույն հոդվածի 2-րդ մասում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքով սահմանված իմաստով ու նշանակությամբ:»,

բ. 4-րդ և 5-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

6) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ներքաղաքային երթուղու շահագործման արտոնագիր տրամադրելու պետական տուրքի հաշվարկման նպատակով կիրառվում են երթուղու հետ կապված հետևյալ գործակիցները.

1) Երևան քաղաքում՝ 1.0,

2) այլ քաղաքներում՝ 0.5:»,

7) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

8) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածով սահմանված՝ ներքաղաքային երթուղու շահագործման կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արտոնագրերը տրամադրում է հարկային մարմինը՝ բացառապես էլեկտրոնային եղանակով: Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում ուղևորափոխադրում իրականացնող ֆիզիկական անձինք հարկային մարմնում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:»,

9) 7-րդ մասից հանել «միջմարզային, ներմարզային և» և «կամ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների» բառերը,

10) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին մաս.

«7.1. էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը էլեկտրոնային հարթակով էլեկտրոնային ծառայության միջոցով ձևակերպված պատվերով իրականացված ուղևորափոխադրումների համար հաշվարկված, գանձված և պետական բյուջե վճարման ենթակա պետական տուրքի վերաբերյալ հայտարարությունը, իսկ կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման արտոնագիր ստանալու նպատակով այդ գործունեությունն իրականացնելու վերաբերյալ հայտարարությունը, բացառապես էլեկտրոնային եղանակով մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ ներկայացնում են հարկային մարմին: Սույն մասում նշված հայտարարությունների ձևերը և լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:»,

11) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Որևէ ամսվա համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արտոնագիր ստացած կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից տվյալ գործունեության մասով ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի ավելացման դեպքում մինչև ավելացման օրվան նախորդող օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացվում նոր Հայտարարություն՝ տվյալ ամսվա համար նախկինում ներկայացված ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի և ավելացվող ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի մեծությունների հանրագումարով: Ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի ավելացման դեպքում ավելացված ավտոբուսների, միկրոավտոբուսների նստատեղերի կամ ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի մասով հաշվարկվում է պետական տուրք՝ սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով: Յուրաքանչյուր ամսվա համար արտոնագրի մասով վճարված պետական տուրքը վերադարձման ենթակա չէ:»,

12) 9-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքում նոր Հայտարարությունում ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի ավելացման օրը ներառյալ կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը տրամադրվում է նոր արտոնագիր՝ նախկին արտոնագրում նշված ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի և ավելացվող ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի հանրագումարով՝ ավտոբուսների, միկրոավտոբուսների ավելացման ամսաթիվն ընդգրկող օրվանից մինչև այդ ամսվա ավարտը ներառող ժամանակաշրջանի համար:»,

13) 11-րդ մասից հանել «միջմարզային, ներմարզային,» բառերը,

14) 12-րդ մասի «իմաստով» բառից հետո հանել «թեթև մարդատար մեքենայով,» բառերը,

15) 14-րդ մասում «Սույն հոդվածով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով» բառերով, իսկ «ավտոմեքենայի քանակի կամ գործակցի» բառերը փոխարինել «ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի» բառերով:

16) 15-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական տուրքը պետական բյուջե է վճարվում յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ:»:

Հոդված 2. Օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 18-րդ կետ.

«18) էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության մատուցման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով»

Հոդված 3. Օրենքի 32-րդ հոդվածում վերջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«Ուղևորափոխադրումները էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության միջոցով ձևակերպված պատվերով իրականացվելու դեպքում յուրաքանչյուր ուղևորափոխադրման համար պետական տուրքի հաշվարկման և գանձման լիազորությունները պատվիրակվում են էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին, որոնք սույն օրենքի 19.7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափով գանձված պետական տուրքի գումարները պետական բյուջե են վճարում յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ:»:

Հոդված 4. Օրենքի 34-րդ հոդվածի նախավերջին պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Ուղևորափոխադրումները էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության միջոցով ձևակերպված պատվերով իրականացվելու դեպքում յուրաքանչյուր ուղևորափոխադրման համար սույն օրենքի 19.7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական տուրքի գանձման և պետական բյուջե վճարման պատասխանատվությունը կրում են էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը:»:

Հոդված 5. Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում՝

1) «վճարողից» բառից հետո լրացնել «(սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված դեպքում՝ սույն օրենքի 19.7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական տուրքի գանձման և պետական բյուջե վճարման համար պատասխանատու կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից)» բառերը,

2) «վճարողները» բառից հետո լրացնել «(սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված դեպքում՝ սույն օրենքի 19.7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական տուրքի գանձման և պետական բյուջե վճարման համար պատասխանատու կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը)» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-623[3] -27.06.2023-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.7-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19.7. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներքաղաքային երթուղու շահագործման, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց կողմից թեթև մարդատար ավտոմոբիլներով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների, ինչպես նաև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման արտոնագիր տրամադրելու համար պետական տուրքի դրույքաչափերը»,

2) 1-ին մասում՝

ա. հանել «միջմարզային, ներմարզային,» բառերը,

բ. «ուղևորափոխադրումների» բառից առաջ լրացնել «ներքաղաքային երթուղով» բառերը,

գ. «տրամադրելու համար» բառերից հետո լրացնել «ամսական» բառը,

~~2~~3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց կողմից թեթև մարդատար ավտոմոբիլներով Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների, ինչպես նաև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով Հայաստանի Հանրապետության տարածքում ուղևորափոխադրումների իրականացման համար արտոնագիր տրամադրելու պետական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր փոխադրման ընդհանուր արժեքի՝

կանխիկ դրամով վճարումների դեպքում	անկանխիկ դրամով վճարումների դեպքում
2 տոկոսի չափով՝ 2024 թվականի սեպտեմբերի 1-ից	1,5 տոկոսի չափով՝ 2024 թվականի սեպտեմբերի 1-ից
3,5 տոկոսի չափով՝ 2025 թվականի հունվարի 1-ից	2,5 տոկոսի չափով՝ 2025 թվականի հունվարի 1-ից
5 տոկոսի չափով՝ 2026 թվականի հունվարի 1-ից	4 տոկոսի չափով՝ 2026 թվականի հունվարի 1-ից

4) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Ուղևորափոխադրումները էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության միջոցով ստացված պատվերով իրականացվելու դեպքում յուրաքանչյուր ուղևորափոխադրման համար սույն սույն հոդվածի 2-րդ մասում նշված չափով պետական տուրքը գանձում և պետական բյուջե է վճարում էլեկտրոնային հարթակով ուղևորա-փոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը:»,

~~3~~5) 3-րդ մասում՝

ա. 3-րդ ~~ենթա~~կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) սույն հոդվածի 2-րդ մասում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքով սահմանված իմաստով ու նշանակությամբ:»,

բ. 4-րդ և 5-րդ ~~ենթա~~կետերն ուժը կորցրած ճանաչել,

~~3~~6) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ներքաղաքային երթուղու շահագործման արտոնագիր տրամադրելու պետական տուրքի հաշվարկման նպատակով կիրառվում են երթուղու հետ կապված հետևյալ գործակիցները.

1) Երևան քաղաքում՝ 1.0,

2) այլ քաղաքներում՝ 0.5:»,

~~4~~ 7) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

~~5~~8) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածով սահմանված՝ ներքաղաքային երթուղու շահագործման կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արտոնագրերը տրամադրում է հարկային մարմինը՝ բացառապես էլեկտրոնային եղանակով: Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում ուղևորափոխադրում իրականացնող ֆիզիկական անձինք հարկային մարմնում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:»,

~~6~~9) 7-րդ մասից հանել «միջմարզային, ներմարզային և» և «կամ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների» բառերը,

~~7~~10) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին մաս.

«7.1. էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը էլեկտրոնային հարթակով էլեկտրոնային ծառայության միջոցով ձևակերպված պատվերով իրականացված ուղևորափոխադրումների համար հաշվարկված, գանձված և պետական բյուջե վճարման ենթակա պետական տուրքի վերաբերյալ հայտարարությունը, իսկ կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման արտոնագիր ստանալու նպատակով այդ գործունեությունն իրականացնելու վերաբերյալ հայտարարությունը, բացառապես էլեկտրոնային եղանակով մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ ներկայացնում են հարկային մարմին: Սույն մասում նշված հայտարարությունների ձևերը և լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:»,

~~8~~11) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Որևէ ամսվա համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արտոնագիր ստացած կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից տվյալ գործունեության մասով ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի ավելացման դեպքում մինչև ավելացման օրվան նախորդող օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացվում նոր

Հայտարարություն՝ տվյալ ամսվա համար նախկինում ներկայացված ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի և ավելացվող ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի մեծությունների հանրագումարով: Ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի ավելացման դեպքում ավելացված ավտոբուսների, միկրոավտոբուսների նստատեղերի կամ ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի մասով հաշվարկվում է պետական տուրք՝ սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով: Յուրաքանչյուր ամսվա համար արտոնագրի մասով վճարված պետական տուրքը վերադարձման ենթակա չէ:»,

~~9~~12) 9-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքում նոր Հայտարարությունում ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի ավելացման օրը ներառյալ կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը տրամադրվում է նոր արտոնագիր՝ նախկին արտոնագրում նշված ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի և ավելացվող ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի հանրագումարով՝ ավտոբուսների, միկրոավտոբուսների ավելացման ամսաթիվն ընդգրկող օրվանից մինչև այդ ամսվա ավարտը ներառող ժամանակաշրջանի համար:»,

~~10~~13) 11-րդ մասից հանել «միջմարզային, ներմարզային,» բառերը,

~~11~~14) 12-րդ մասի~~ց~~ «իմաստով» բառից հետո հանել «թեթև մարդատար մեքենայով,» բառերը,

~~12~~15) 14-րդ մասում «Սույն հոդվածով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով» բառերով, իսկ «ավտոմեքենայի քանակի կամ գործակցի» բառերը փոխարինել «ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի» բառերով

~~13~~16) 15-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական տուրքը պետական բյուջե է վճարվում յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ:»:

Հոդված 2. Օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 18-րդ կետ.

«18.) էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության մատուցման իրավունք ձեռք բերելու համար	Տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով»

Հոդված 3. Օրենքի 32-րդ հոդվածում վերջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«Ուղևորափոխադրումները էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության միջոցով ձևակերպված պատվերով իրականացվելու դեպքում յուրաքանչյուր ուղևորափոխադրման համար պետական տուրքի հաշվարկման և գանձման լիազորությունները պատվիրակվում են էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման

ծառայություն մատուցող կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին, որոնք սույն օրենքի 19.7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափով գանձված պետական տուրքի գումարները պետական բյուջե են վճարում յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ:»:

Հոդված 4. Օրենքի 34-րդ հոդվածի նախավերջին պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Ուղևորափոխադրումները էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության միջոցով ձևակերպված պատվերով իրականացվելու դեպքում յուրաքանչյուր ուղևորափոխադրման համար սույն օրենքի 19.7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական տուրքի գանձման և պետական բյուջե վճարման պատասխանատվությունը կրում են էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը:»:

Հոդված 5. Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում՝

1) «վճարողից» բառից հետո լրացնել «(սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված դեպքում՝ սույն օրենքի 19.7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական տուրքի գանձման և պետական բյուջե վճարման համար պատասխանատու կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից)» բառերը,

2) «վճարողները» բառից հետո լրացնել «(սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված դեպքում՝ սույն օրենքի 19.7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական տուրքի գանձման և պետական բյուջե վճարման համար պատասխանատու կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը)» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տրանսպորտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Կ-623 -27.06.2023-ՏՀ-011/1) վերաբերյալ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկու-թյունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին					
1.	**Կառավարություն**	1-ին հոդված	1. Առաջարկում ենք հստակ նշել այն պարբերության համարը, որից հետո նախատեսվում է լրացնել նոր հասկացություն, իսկ «հասկացություն» բառը փոխարինել «պարբերություն» բառով՝ Հաշվի առնելով վերոգրյալը՝ **«ոչ կանոնավոր փոխադրում» հասկացությունից» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել «24-րդ պարբերությունից»** բառերը: 2. Սահմանվող հասկացության մեջ «ձևակերպման» բառը առաջարկում ենք փոխարինել «ընդունման» բառով	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
2.	**Կառավարություն**	3-րդ հոդված	3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում՝ «Վերնագրից «Ավտոմոբիլային» բառը հանել, հաջորդ բառը գրել մեծատառով:» բառերի փոխարեն լրացնել՝ **«Վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ**	Ընդունվել է	Ընդունվել է

			հետևյալ բովանդա- կությամբ. «Հոդված 16. Ոչ կանոնավոր փոխադրումների կազմակերպումը».» բառերը		
3.	**Կառավարություն**	5-րդ հոդված	1. Առաջարկում ենք վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, 2. 5-րդ հոդվածի 2-րդ կետում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը, ինչպես նաեւ նույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ»:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
2. «Տրանսպորտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին					
1.	**Կառավարություն**	1-ին հոդված	1. Առաջարկում են «(այսուհետ օրենք)» ձևակերպումը հանել, քանի որ հետագայում հղում չի կատարվում: 2. «սահմանման մեջ» բառերից հետո լրացնել ««ձեռներեց» բառը փոխարինել «ձեռնարկատեր» բառով, իսկ» բառերը՝ **տերմինների միասնականությունը ապահովելու նպատակով**	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին					
1.	**Կառավարություն**	Վերնագիր	Առաջարկում ենք վերնագրում՝ «ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» բառից հետո լրացնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»	Ընդունվել է	Ընդունվել է

			բառերը՝ հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի վերնագիրը, ինչպես նաև հանել վերնագրի չակերտները:		
2.	**Կառավարություն**	**1-ին հոդված**	1. Առաջարկում ենք Վարչական իրավա-խախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի կրճատ և լրիվ անվանումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներին. Հաշվի առնելով վերոգրյալը 1-ին հոդվածում՝ «1985 թվականի դեկտեմբերի 6-ի» բառերը լրացնել օրենսգրքի անվանումից առաջ, ինչպես նաև հանել վերնագրի չակերտները,	Ընդունվել է	Ընդունվել է
			2. Առաջարկում ենք վերանայել 1-ին հոդվածի մասերի համարակալումը,	Ընդունվել է	Ընդունվել է
			3. 1-ին հոդվածի 1-ին մասում՝ «ձեռներեցի կամ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար» բառերի փոխարեն լրացնել՝ «ձեռնարկատիրոջ կամ պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցնող» բառերը՝ քանի որ գործող օրենքի 170[6] հոդվածում կիրառվող հասկացությունները պետք է համապատասխանեցվեն «Հանրային ծառայության մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» օրենքներով սահմանված հասկացությունների պահանջներին:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
			4. 1-ին հոդվածի 2-րդ (նոր		

			համարակալմամբ 3-րդ) մասում՝ 1) «ձևակերպված» բառը առաջարկում ենք փոխարինել «ընդունված» բառով, 2) «հարկային մարմնին» բառերից հետո լրացնել «և տրանսպորտային բնագավառում պետական լիազոր մարմնին» բառերը, քանի որ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 6-րդ մասում նախատեսված է ինչպես հարկային, այնպես էլ լիազոր մարմնին տվյալների բազային հասանելիության պահանջ:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
4. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին					
1.	**Կառավարություն**	1-ին հոդված 1-ին հոդված	1. Առաջարկում ենք շտկել հոդվածի մասերի համարակալման հաջորդականությունը, 2. Առաջարկում ենք 1-ին հոդվածի 2-րդ (խմբագրված 3-րդ) մասի 2-րդ պարբերությունը համարակալել որպես առանձին 2.1-ին կետ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին համապատասխանեցնելու նպատակով Հաշվի առնելով վերոգրյալը՝ 1-ին հոդվածի 2-րդ (խմբագրված 3-րդ) մասի	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			վերջին նախադասությունը առաջարկում ենք խմբագրել և շարադրել որպես նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ «4) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս. «2.1.Ուղևորափոխադրումները էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության միջոցով ստացված պատվերով իրականացվելու դեպքում յուրաքանչյուր ուղևորափոխադրման համար սույն հոդվածի 2-րդ մասում նշված չափով պետական տուրքը գանձում և պետական բյուջե է վճարում էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը:», Ըստ այդմ մասերի համարակալումը վերանայել.	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է
		1-ին հոդված	3. 1-ին հոդվածի 3-րդ (խմբագրված՝ 5-րդ) կետի «ա.» և «բ.» մասերում «ենթակետը», «ենթակետերն» բառերը փոխարինել «կետը», «կետերն» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
		1-ին հոդված	4. 1-ին հոդվածի 11-րդ (խմբագրված՝ 14-րդ) կետով նախատեսված փոփոխության մեջ առաջարկում ենք հստակեցնել «թեթեւ մարդատար մեքենայով,» բառերը հանելու հղումը, քանի որ դրանք կիրառված են երկու անգամ, հաշվի առնելով վերոգրյալը՝ «12-րդ» բառից հետո լրացնել «մասից «իմաստով» բառից հետո» բառերը: 5. 1-ին հոդվածի 12-րդ (խմբագրված՝ 15-րդ)	Ընդունվել է	Ընդունվել է

		1-ին հոդված	կետում «բառերով,» բառից հետո լրացնել «իսկ «ավտոմեքենայի քանակի կամ գործակցի» բառերը փոխարինել «ավտոբուսների, միկրոավտոբուսների քանակի» բառերով» բառերը՝ հաշվի առնելով 11-րդ կետով գործող օրենքի 8-րդ մասում կատարվող փոփոխությունը, որով հանվել է «(այսուհետ՝ սույն հոդվածում՝ ավտոմեքենա)» տերմինը		Ընդունվել է
2.	**Կառավարություն**	2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասում լրացվող 18-րդ կետում «18» թվից հետո միջակետը փոխարինել փակագծով՝ «18)»	Ընդունվել է	Ընդունվել է
5. «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին					
1.	**Կառավարություն**	1-ին հոդված	1-ին հոդվածում «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքի 22-րդ հոդվածին կատարված հղումը առաջարկում ենք հստակեցնել՝ հղում անելով 22-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակին՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ 1-ին հոդվածում «22-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «2-րդ մասի աղյուսակի» բառերը, իսկ «Գործունեություն» բառից առաջ լրացնել «4.» թիվը	Ընդունվել է	Ընդունվել է
6. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին					
1.	**Կառավարություն**	1-ին հոդված	1. Օրենսգրքի լրիվ անվանման հիշատակումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված իրավադրույթին՝ այն է. «5.	Ընդունվել է	Ընդունվել է

		1-ին հոդված	Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»: Հաշվի առնելով վերոգրյալը 1-ին հոդվածում «2016 թվականի հոկտեմբերի 4-ի» բառերը առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ, 2. 1-ին հոդվածում «ենթակետ» բառը առաջարկում ենք փոխարինել «կետը» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**Կառավարություն**	4-րդ հոդված 4-րդ հոդված	1. 4-րդ հոդվածը առաջարկում ենք համարակալել, 2. 4-րդ հոդվածի՝ խմբագրված 2-րդ կետում «ենթաօրենսդրական» բառից հետո առաջարկում ենք լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է